I

ԱՆԻՆ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՀՌՉԱԿԵԼՈՒ 1050-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

# ԱՆԻԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ՄՈՒՐԱԴ ՀԱՍՐԱԹՅԱՆ

*Իր պետականության երեքհազարամյա պատմության ընթացքում Հայաստանն ունեցել է տասներկու մայրաքաղաք: Դա բացառիկ երևույթ է և պայմանավորված է, առաջին հերթին, հայ ժողովրդի պատմության առանձնահատկություններով: Հայաստանը, գտնվելով Արևելքը Արևմուտքին կապող ճանապարհների խաչմերուկում, դարեր շարունակ ենթարկվել է հարևան ու հեռավոր երկրների, ազգերի ու ցեղերի հարձակումներին, և անկախության համար մղվող գրեթե անընդհատ պայքարի ընթացքում թշնամու կողմից ավերվել են նրա քաղաքներն ու առաջին հերթին՝ մայրաքաղաքները:*

*Հայկական լեռնաշխարհը (որը համընկնում է պատմական Հայաստանի տարածքին) բնորոշ է որպես ակտիվ սեյսմիկ գոտի: Եվ հաճախակի կրկնվող կործանիչ երկրաշարժերն ավերել են երկրի շատ բնակավայրեր, որոնց թվում՝ մայրաքաղաքները:*

*Հայաստանի մայրաքաղաքների մեծ թիվն ունի նաև սուբյեկտիվ պատճառ. ինչպես Քրիստոսից առաջ, այնպես էլ միջնադարում հայ թագավորներից ոմանք իրենց իշխանությունն սկսել են նոր մայրաքաղաք հիմնելով՝ հաճախ իրենց անունով կոչելով այն (Երվանդաշատ, Արտաշատ, Տիգրանակերտ, Վաղարշապատ):*

*Հայաստանի բազմաթիվ մայրաքաղաքներից ամենահռչակավորն Անին է՝ հայ ժողովրդի սիրելի և լեգենդար ոստանը: Այն գտնվում է պատմական Շիրակում (այժմ՝ Թուրքիայի տարածքում՝ Հայաստանի Հանրապետության սահմանին հանդիպակաց):*

*Անին տեղանքի և բնական պայմանների նպատակահարմար օգտագործումով, կառուցապատման մտածված կազմությամբ, պաշտպանական բազմաստիճան համակարգով, եկեղեցական և աշխարհիկ հիանալի կառույցներով միջնադարյան Հայաստանի լավագույն քաղաքն է: Այն տեղադրված է Ախուրյան գետի և նրա վտակ Անի գետակի միախառնումով ստացվող, մոտավորապես եռանկյունաձև հրվանդանի վրա, որը երկու կողմից՝ արևելքից ու արևմուտքից, եզերված է խոր կիրճերով, իսկ հյուսիսից քաղաքի տարածքը բնականորեն սահմանազատվում է երկու ձորակներով՝ հյուսիս-արևելքից Գայլիձորով, հյուսիս-արևմուտքից Իգաձորով: Քաղաքի զբաղեցրած տարածքը հիմնականում հարթ է, և միայն հրվանդանի հարավային կողմում կան երկու՝ Ներքին բերդի (ժողովրդական*

*անվանումով՝ «Աղջկաբերդ») և ավելի բարձր՝ Միջնաբերդի բլուրները: Նման դիրքն ապահովում է Անիի պաշտպանվածությունը բնական միջոցներով՝ տեղանքի առանձնահատկություններն օգտագործելով, որոնք լրացվում են պաշտպանական կառույցներով: Միաժամանակ, եռանկյունաձև հրվանդանի վրա տեղադրությունը հնարավորություն է տալիս ամրոց-բնակավայրին զարգանալու, ձևավորվելու որպես քաղաք, ինչն անհնար է, օրինակ, լեռների գագաթին հիմնված ամրոցների համար:*

*Անին՝ որպես ամրոց, որպես վարչական և կրոնական կենտրոն-բնակավայր, ունեցել է ուղիղ հազարամյա պատմություն՝ IV դարից մինչև XIV դարը: Առաջին շինություններն Անիում կառուցվել են Ներքին բերդում: Պատմիչ Վարդան Բարձրբերդցին հայտնում է, որ Գրիգոր Լուսավորիչը մկրտել է Անիի Ներքին բերդի իշխանին: Միաժամանակ այստեղ եկեղեցի է կառուցել: XII դ. Անիի տիրակալ, իշխան Զաքարե ամիրսպասալարը Ներքին բերդում իր կառուցած եկեղեցու շինարարական արձանագրության մեջ նշում է, որ այն հիմնել է լուսավորչաշեն եկեղեցու մոտ:*

*Վաղ միջնադարում Անին պատկանել է Կամսարական իշխաններին: V դ. հայ պատմիչներն Անին հիշատակում են որպես անառիկ ամրոց. Եղիշեն՝ Պարսից դեմ հայերի 451 թ. ապստամբության և Ղազար Փարպեցին՝ Հայաստանի 480-ական թվականների ազատագրական պայքարի կապակցությամբ: Պահպանվել են Կամսարականների կառուցած պարսպի հատվածներ՝ մետաղական կապերով ամրացված կոպտատաշ քարերով: Կամսարական իշխանների օրոք Անիի ամրոցը գրավել է Միջնաբերդի և Ներքին բերդի բլուրները: Այդ ժամանակաշրջանից շատ քիչ բան է մնացել՝ Ներքին բերդի բլրի հարավային կողմը պաշտպանող, քառակուսի բուրգերով պարսպի մնացորդները և Միջնաբերդում «Պալատական» կոչված միանավ եկեղեցին: Վաղ միջնադարում, սակայն, Անին դեռ քաղաք չէր բառիս բուն իմաստով, այլ միայն ամրոց:*

*VIII դ. վերջում Անին անցավ Բագրատունիների տիրապետության տակ և արդեն X դ. այն բարգավաճ գյուղաքաղաք էր՝ բազմաթիվ «կուղպակներով»՝ արհեստանոց-խանութներով:*

*Անիի քաղաքաշինական զարգացման պատմության մեջ նոր և ամենակարևոր փուլն սկսվեց 961 թ., երբ 1050 տարի առաջ Աշոտ Գ Ողորմած թագավորը մայրաքաղաքը Կարսից տեղափոխեց Անի: 992 թ. Անին դարձավ նաև Հայաստանի հոգևոր կենտրոնը՝ Հայոց կաթողիկոսական աթոռը Արգինայից այստեղ տեղափոխվեց:*

*X–XI դդ.՝ անկախ Հայաստանի գոյության տարիներին, Անին քաղաքաշինական բուռն զարգացում ապրեց: Բագրատունի թագավորները հիմնովին վերակառուցեցին Միջնաբերդը և պարիսպներով պաշտպանված պալատական համալիր կառուցեցին: Աշոտ Գ Ողորմածը 963–964 թթ. պարսպապատեց Միջնաբերդից դեպի հյուսիս գտնվող հրվանդանի նեղ՝ Ախուրյանի կիրճի և Ծաղկոցաձորի միջև ընկած մասը, որը պարփակել է, այսպես կոչված, «Հին քաղաքի» 7 հա տարածքը:*

*Անիի քաղաքաշինական զարգացման բուռն տեմպերի հետևանքով ընդամենը քառորդ դար անց քաղաքի տարածքի զգալի ընդարձակման կարիք զգացվեց: Սմբատ Բ Տիեզերակալ թագավորը 989 թ. սկսեց նոր պարիսպների*

*կառուցումը՝ Աշոտյան պարսպից 720 մ հյուսիս: Պաշտպանական նոր գոտու տեղը չափազանց նպատակահարմար էր ընտրված՝ Իգաձորի և Գայլիձորի միջև, որոնք, խրվելով հրվանդանի տարածքը, պաշտպանական պատերի երկարությունը կրճատում են մոտ կես կմ: Երկու պարիսպների միջի տարածությունը՝ 41,8 հա մակերեսով, զբաղեցրեց Նոր կամ Արտաքին անվանված քաղաքը, որտեղ կառուցվեցին Անիի՝ գեղարվեստական արժեքով և մեծությամբ առավել աչքի ընկնող եկեղեցիներն ու աշխարհիկ շենքերը:*

*Անիի տնտեսական, մշակութային, ճարտարապետական-շինարարական կյանքի շեշտակի վերելքը տեղի ունեցավ Գագիկ Ա Բագրատունու թագավորության տարիներին (990–1020 թթ.):*

*Անիի քաղաքաշինական զարգացմանը նպաստել են մի շարք գործոններ, որոնցից են քաղաքի՝ Հայաստանի վարչական, կրոնական, մշակութային կենտրոնը լինելը, արհեստների զարգացումը և, կարևորը, առևտրական տարանցիկ ճանապարհների հանգուցակետ լինելը: Մատենագիտական տվյալներով և պեղումների արդյունքներով բացահայտվում է Անիի՝ արհեստագործական խոշոր կենտրոն լինելը, որի փողոցներում և առանձին թաղերում խմբավորված են եղել տարբեր արտադրանք տվող արհեստանոցներ՝ իրենց կից խանութներով: Անիում է մշակվել Շիրակի բարեբեր դաշտերի բերքը, և քաղաքում գործել են բազմաթիվ ձիթհաններ ու ջրաղացներ: Անիի կապը շրջակա բնակավայրերի հետ ապահովվել են ձորերի վրա կառուցված մի շարք կամուրջներով, որոնցից ամենախոշորը, Ախուրյան գետի վրա, ունեցել 31,5 մ թռիչք, երկհարկ պահակատներ-մաքսատներ:*

*Անիի քաղաքաշինական առանցքը գլխավոր պողոտան էր՝ Բուն փողոցը, որը միացնում էր Աշոտյան պարիսպները Սմբատյան պարիսպների կենտրոնական դարպասի՝ Ավագ դռան հետ: Բուն փողոցը ձգվել է մինչև Միջնաբերդ և փոխհատվել է լայնական ուղղությամբ մի շարք փողոցներով, որոնց վրա կառուցվել են քաղաքի բազմաթիվ եկեղեցիները, ունևոր խավի բնակելի տները, արհեստանոցներն ու խանութները:*

*1045 թ. Բագրատունյաց Հայաստանի անկախության կորստին հետևեց բյուզանդական կարճատև տիրապետությունը: 1064 թ. սելջուկ թուրքերը գրավեցին և ավերեցին Անին: 1072–1199 թթ. Անիին տիրեցին սելջուկների վասալ Շեդադյանները, որի ժամանակ անկում ապրեց քաղաքի տնտեսական ու մշակութային կյանքը:*

*1199 թ. Անին ազատագրվեց և դարձավ Զաքարյանների տիրության կենտրոնը: Մինչև 1236 թ.՝ մոնղոլների կողմից գրավելը, Անին ապրեց իր ինչպես տնտեսական, այնպես էլ մշակութային վերածնունդը: Զաքարյան իշխանները քաղաքի առևտրական կապիտալ դիզած մեծահարուստների լայն մասնակցությամբ վերաշինեցին պարիսպները, նորոգեցին եկեղեցիները, կառուցեցին նորերը, դրանց հետ նաև պալատներ, հյուրատներ:*

*Անիի բուռն կառուցապատումը, տնտեսական կյանքի մեծ վերելքը կապված էին քաղաքն առևտրական ուղիների խաչմերուկ լինելու հետ: XIII դ. Անիում արհեստների և առևտրի հետագա զարգացումը բերեց քաղաքաշինական փոփոխությունների: Նոր քաղաքում մինչ այդ ստեղծված*

*հասարակական-առևտրական կենտրոնը ձևավորվում է և տարածվում Բուն փողոցի ուղղությամբ դեպի քաղաքի գլխավոր դարպասը՝ Ավագ դուռը: Կենտրոնի փողոցների կառուցապատումը խտանում է նոր վաճառատների ու հյուրանոցների շինարարությամբ:*

*Անիի քաղաքաշինական մշակույթի կարևոր մասն է կազմում քաղաքի բարեկարգումը: Փողոցները և հրապարակները սալահատակված են եղել, փողոցների մեծ թեքություն ունեցող հատվածները քարե աստիճաններ են ունեցել: XI դարից քաղաքում կանոնավոր ջրամատակարարում է եղել (ջուրը բերվել է 12 կմ հեռավորության աղբյուրներից կավե խողովակներով), քաղաքում գործել են հասարակական բաղնիքներ:*

*Անիի բնակչությունը մոտավոր հաշվարկներով հարյուր հազար մարդ է եղել: Քաղաքի տարածքը բավարար չէր այդքան բնակչություն տեղավորելու համար, և Անին տարածվել է նաև պարիսպներից դուրս՝ դեպի հյուսիս՝ հարթավայր, որտեղ գտնվում էին քաղաքի հետ ամբողջություն կազմող արվարձանները: Դրանք ձգվել են Սմբատյան պարիսպներից մոտ 3 կմ այն կողմ: Հետևաբար, Անին, միջնադարյան Հայաստանի շատ քաղաքների նման, ունեցել է հատակագծային բազմամաս կազմություն: Եթե հաշվի առնենք իր պարիսպներն ունեցող պալատական համալիրը որպես քաղաքաշինական առանձին միավոր, ապա Անին ունեցել է քառամաս կազմություն՝ պալատ, միջնաբերդ, քաղաք և արվարձաններ:*

*Անիի քաղաքաշինական կազմությունն ունի մի կարևոր առանձնահատկություն՝ այն «երկհարկանի» է: Հրվանդանը, որի վրա տեղադրված է Անին, իր ընդերքում պարունակում է նաև «ստորգետնյա» քաղաք, որն օրգանական ամբողջություն է կազմում վերգետնյայի հետ՝ դարձնելով Հայաստանի մայրաքաղաքը Մերձավոր Արևելքի ամենախոշոր քաղաքներից մեկը: Մինչև XX դ. սկիզբը դեռևս պահպանվել էին մոտ հազար ժայռափոր կառույցներ, իսկ XII–XIII դդ. դրանց թիվն անհամեմատ մեծ է եղել:*

*Վիմափոր շինություններն ունեն ամենատարբեր նշանակությունը. բնակելի կացարաններ աղքատների համար (ամենաշատը դրանք են), եկեղեցիներ, վանական ոչ մեծ համալիրներ, մատուռներ, դամբարաններ-տապանատներ, խանութներ, արհեստանոցներ, ձիթհանքեր, բազմաթիվ աղավնատներ, նույնիսկ քարավանատուն: Դրանք բոլորը հաղորդակցվել են միմյանց հետ ստորգետնյա փողոցներով, որոնք մուտք են ունեցել Անիի հրվանդանը եզերող ձորալանջերից:*

*Վիմափոր Անին եղել է հինգհարկանի, սակայն XIX դ. պահպանված են եղել արդեն միայն երեքը:*

*Ստորգետնյա Անին ունեցել է նաև ռազմավարական նշանակություն. այսպես, XIII դ.՝ Արդաբիլի սուլթանի անակնկալ հարձակման ժամանակ, Անիի բնակչությունը պատսպարվեց ստորգետնյա մասում և պաշտպանվեց այնտեղ, մինչդեռ վերգետնյա քաղաքը գրավվեց թշնամու կողմից:*

*Վիմափորներում էին գտնվում նաև մեծահարուստների դամբարանները, այդ թվում Տիգրան Հոնենցինը՝ բարձրարվեստ որմնանկարներով ծածկված:*

*Անիի ճարտարապետական ընդհանուր կերպարի կարևորագույն կառույցներն են, տաճարներից բացի, հզոր աշտարակներով օժտված պարիսպները: Ներքին բերդի և միջնաբերդի պարիսպները կառուցված են կոպտատաշ բազալտ քարով, կրաշաղախով: Ներքին բերդի պարիսպն ունի հատակագծում կիսաշրջանաձև երեք և ուղղանկյուն մեկ բուրգ: Միջնաբերդի մոտ 700 մ երկարությամբ պարիսպը, որը հիմնականում պաշտպանում է թագավորական պալատը հյուսիսից՝ քաղաքի կողմից, ուժեղացված է նույնպես չորս աշտարակներով:*

Անիի Սմբատաշեն պարիսպները (X դ.)

*Աշոտ III Ողորմածի 964 թ. կառուցած պարիսպը՝ 120 մ երկարությամբ, ձգվում է եռանկյունաձև հրվանդանի նեղ մասում, ունի վեց բուրգ, որոնց ներսում, ինչպես հայտնում է պատմիչ Վարդան Արևելցին, տեղադրվել են նաև եկեղեցիներ:*

*Քաղաքի բուռն աճի թելադրանքով, երբ անհրաժեշտություն դարձավ ընդարձակել Անիի տարածքը, Աշոտյան պարիսպներից 720 մ հյուսիս Սմբատ Բ արքան կառուցեց մոտ 2,5 կմ երկարությամբ երկշարք նոր պարիսպներ: Մեկ մետր հաստությամբ այս պարսպապատերը շարված են սրբատաշ, բազմերանգ (հիմնականում դեղնավուն, կարմիր և սև գույնի) քարերի կիրառումով: Հյուսիսից՝ թշնամու մոտեցման կողմից, կառուցված պարսպի առաջին շարքը զգալի ցածր է մոտ 10 մ բարձրություն ունեցող երկրորդ շարքից: Սմբատաշեն պարիսպներն ունեն 55 աշտարակ, որոնք երկու-երեք հարկանի էին և լայն պատերի մեջ ունեին հարկերը միմյանց կապող աստիճաններ: Սմբատյան պարիսպներն ունեն 14 դարպաս և անցում, որոնց դռները շինված էին մայրու փայտից և ամրացված երկաթե գամերով:*

*Գլխավոր դարպասները երեքն էին՝ Ավագ, Կարսի և Դվինի: Գլխավոր՝ Ավագ դարպասը կրկնակի էր՝ երկու կողմից պաշտպանված բարձր, կիսաշրջանաձև աշտարակներով: Դարպասի վերևի պատին Անի քաղաքի զինանշանն է՝ հովազի բարձրաքանդակով: Դվինի դարպասը կարմիր և սև տուֆ քարերի շարվածքով ձևավորում ունի, որի պատճառով գրականության մեջ այն հաճախ անվանվում է «Շախմատյան»:*

*Սմբատյան պարիսպները նույնպես բուրգերի ներսում մատուռներ են ունեցել, և սա էլ է պատճառ հանդիսացել Անին «հազար ու մեկ եկեղեցիների» քաղաք անվանելուն:*

*Անիի պաշտպանական համակարգի մաս են կազմել Տիգնիս (IX դ.) և Մաղասբերդ (VI–X դդ.) ամրոցները, որոնք հսկել են Հայաստանի մայրաքաղաքի մատույցները:*

*Անիում կյանքը հարատևել է մինչև XIV դ. կեսը: 1319 թ. երկրաշարժի հետևանքով քաղաքի լքվելու մասին տեսակետն ավելի շուտ ավանդության վրա է հիմնված, քան փաստի: Անիի անկման և նրա՝ որպես քաղաք գոյությունը դադարելու հիմնական պատճառներն էին մոնղոլների կեղեքիչ հարկահանությունը, նրանց հաստատած հետամնաց վարչակարգը և տնտեսաձևը ու, ամենակարևորը, առևտրի անկումը և առևտրական տարանցիկ ճանապարհների տեղափոխվելը դեպի հարավ:*

* * *

*Անիի տարածքի հնագույն և իր ճարտարապետությամբ բացառիկ, իսկ նշանակությամբ՝ խորհրդավոր հուշարձանը քաղաքի հյուսիսարևելյան կողմում գտնվող չորս հաստահեղույս, գլանաձև մույթերով կառույցն է, որը միջնադարում չորս աբսիդների հավելումով վերածվել է խաչաձև մատուռի: Այն չունի եկեղեցական շենքի համար պարտադիր արևելք-արևմուտք կողմնորոշում՝ դեպի արևելք է ուղղված ոչ թե աբսիդը, այլ մույթը: Մույթերից յուրաքանչյուրի բարձրությունը (խարիսխը, բունը և խոյակը միասին) 2,25 մ է, իսկ միմյանցից հեռավորությունը՝ 1,90 մ: Քառամույթ կառույցն Անիի հնագույն, նախաքրիստոնեական ժամանակաշրջանից պահպանված, մեմորիալ նշանակության շինություն է, որն իր ճարտարապետությամբ առնչվում է հելլենիստական ամպհովանիաձև հուշարձաններին (կան նաև այլ տեսակետներ՝ դամբարան, կրակապաշտական տաճար և այլն):*

*Անիի հնագույն մյուս հուշարձաններն Իգաձորի եզրին, Պարոնի պալատի մոտ գտնվող երկու կիսագետնափոր դամբարաններն են, որոնք իրար կողքի են և կողմնորոշված են արևելք-արևմուտք: Ձորի լանջից մուտք է բացվում դեպի հյուսիսային դամբարանի մոտ քառակուսի հատակագծով (2,55 x 2,40 մ) թաղածածկ խուցը, որն արևելքում ունի հատակագծում կիսաշրջանաձև աբսիդ: Դամբարանի կողային պատերում թաղածածկ խորշեր են, որոնցում մեկական սարկոֆագներ են փորված: Հարավային դամբարանն ունի նույն ճարտարապետությունը, միայն առանց հարավային խորշի:*

*Անիի վիմափոր այս դամբարաններն իրենց հորինվածքով հար և նման են Աղցքի Արշակունիների դամբարանին (364 թ.), որը թույլ է տալիս*

*դրանք թվագրել IV–V դդ.՝ Անիի Կամսարական իշխանների տիրապետության ժամանակաշրջանով (Ն. Տոկարսկի):*

*Անիի վաղքրիստոնեական մյուս հուշարձանը միջնաբերդի Պալատական եկեղեցին է: Այն միանավ, թաղածածկ բազիլիկ է, ոչ մեծ չափերի (5,85 x 9,40 մ ներսի չափերով)՝ կառուցված պալատական համալիրի հարավ-արևմտյան մասում: Թեթևակի պայտաձև հատակագծով Ավագ խորանը ներառված է պատերի ուղղանկյուն պարագծում: Աղոթասրահի երկու զույգ որմնամույթերի վրա հենված թաղակիր կամարները կրում են եկեղեցու ծածկը: Որմնամույթերի և հարավային ճակատի խորշի խոյակները մշակված են վաղմիջնադարյան հայ արվեստին բնորոշ զարդաձևերով: Արևմտյան մուտքի բարավորի հարթաքանդակում, ծառով բաժանված պատկերված են երկու հեծյալներ (հավանաբար, Ս. Սարգիսը և Ս. Գևորգը), որոնք նիզակով խոցում են վիշապների:*

*Հարդարանքի արխայիկ բնույթի և շինարարական արձանագրության 622 թվականի հիման վրա Անիի պալատական եկեղեցին վերագրվում է Կամսարական իշխանների ժամանակաշրջանին: XIII դ., Զաքարյանների օրոք, Պալատական եկեղեցուն հյուսիսից կցել են երկհարկանի մատուռ:*

*Երբ 961 թ. Աշոտ Գ Ողորմածը Անին դարձրեց Հայաստանի մայրաքաղաք, անհրաժեշտություն զգացվեց ունենալ Կաթողիկե տաճար, որովհետև Միջնաբերդի եկեղեցիները թե՛ տեղադրությամբ և թե՛ չափերով այդ նպատակին չէին համապատասխանում: Եվ Միջնաբերդը քաղաքի պարիսպների հետ կապող փողոցի վրա նա կառուցեց շքեղ հարդարված եկեղեցի, որը նախապես եղավ եպիսկոպոսական, իսկ 992 թ., Անին կաթողիկոսանիստ դառնալուց հետո, մինչև 1001 թ. ծառայեց որպես Բագրատունյաց Հայաստանի Մայր տաճար:*

*Պեղումներով բացված Աշոտյան եկեղեցին (գրականության մեջ անվանվում է նաև XIII դ. այն նորոգած և զանգակատուն կցած Քարիմադինի անունով) գմբեթավոր դահլիճ է, որի արևելյան որմնամույթերը համատեղված են Ավագ խորանի անկյունների հետ: Արտաքին ճակատները հարդարված են զույգ կիսասյունիկներով դեկորատիվ կամարաշարով և, բացի արևմտյանից, ակոսված են զույգ, եռանկյունաձև կտրվածքով խորշերով: Նուրբ զարդաքանդակներով կամարաշարով է ձևավորված նաև գմբեթի բազմանիստ թմբուկը: Բացառիկ է եկեղեցու արևմտյան ճակատը, որն ունի արտաքուստ խոշոր ելուստ-որմնահեց, իսկ ներսում՝ դեպի աղոթասրահ ուղղված, երեք կիսաշրջանաձև խորշեր:*

*1911 թ. Ն. Մառի պեղումներով Անիի հյուսիսային կողմում ուսումնասիրվեց հարուստ ձևավորումով XI դ. եկեղեցի, որից պահպանվել էին մոտ 3,5–4 մ բարձրությամբ պատերը: Մասնագիտական գրականության մեջ «եզակի» անվանումով ներկայացրած, տեղում չափագրած և ուսումնասիրած Ն. Տոկարսկին գրում է, որ եկեղեցին իր հորինվածքով սովորական, երկու զույգ մույթերով գմբեթավոր դահլիճ է, սակայն ներսում արտասովոր ու եզակի առանձնահատկություններով: Առաջին՝ ընդունված ուղղանկյուն կտրվածքով որմնամույթերի փոխարեն այստեղ խոշոր որմնասյուներ են, որոնց վրա հանգչում են գմբեթակիր կամարները: Երկրորդ՝ Ավագ խորանի կիսաշրջանաձև պատից դուրս են ցցված ինը կիսասյուներ,*

*որոնք եզերում են վերևում գմբեթարդներով բարձր որմնախորշերը: Միջին այան կողքերին երկու լուսամուտներ են: Հարդարանքում ակնհայտ է Գագկաշեն Ս. Գրիգոր տաճարի ազդեցությունը:*

*Ժամանակին լավ պահպանված պատերը, զարդաքանդակներն այսօր ամբողջովին ոչնչացված են, քարերն օգտագործվել են Անիի մոտակա գյուղի շենքերը կառուցելիս:*

*Բագրատունիների օրոք Անիի միջնաբերդում մի շարք եկեղեցիներ են կառուցվել, որոնցից երեքը կիսավեր վիճակում դեռևս պահպանվել էին XX դ. սկզբին:*

*«Իշխանազունների» կոչվող եկեղեցին (XI դ.) պատկանում է գմբեթավոր դահլիճի այն ենթատիպին, որի արևելյան զույգ որմնամույթերը համատեղված են Ավագ խորանի անկյունների հետ: Տեղանքի առանձնահատկությունների թելադրանքով եկեղեցին միայն հյուսիսային ճակատում մուտք ունի, որի շքեղ հարդարանքը (ականթի, արմավենու զարդաքանդակներով) հանդիսանում է հելլենիստական արվեստի վերապրուկը: Սրբատաշ տուֆից շինված չորս ճակատներն ակոսված են զույգ, եռանկյունաձև խորշերով: Կոնաձև վեղարով գմբեթի թմբուկը X–XI դդ. Անիի ճարտարապետական դպրոցում սակավ հանդիպող գլանաձև է: Եկեղեցին, որը XX դ. սկզբին լրիվ կանգուն էր, աստիճանաբար ավերվելով, ամբողջովին կործանվեց 1966 թ.:*

Աբուգամրենց Ս. Գրիգոր եկեղեցին (X դ.)

*Պալատական համալիրի հարավային կողմում գտնվում են քառախորան եկեղեցու ավերակները (պահպանվել են, փաստորեն, հիմքերը): X–XI դդ. պատկանող եկեղեցին ունի արտաքին անկանոն եզրագծով պատերի մեջ ներառված, կիսաշրջանաձև հատակագծով չորս խորան, որոնցից արևելյանի երկու կողմում փոքրիկ ավանդատներ են: Արևելյան ճակատում և արևմտյան խորանի երկու կողմում կան եռանկյունաձև զույգ խորշեր:*

*Միջնաբերդի բարձունքի հարավային եզրին կիսավեր դեռևս կանգուն է վեցախորան եկեղեցի (X–XI դդ.), որից պահպանվել են հիմնական ստորին ծավալը գրեթե ամբողջությամբ և գմբեթի բազմանիստ թմբուկի մի մասը: Պայտաձև հատակագծով աբսիդները ներառված են արտաքին, անհավասար երկարության պատերի եզրագծում: Արևելյան՝ Ավագ խորանի*

*երկու կողմում փոքրիկ ավանդատներն են: Ճակատներն արտաքուստ ունեն երեք զույգ եռանկյունաձև խորշեր: Ուշագրավ է ինտերիերում խորանների ձևը. դրանք իրականացված են կրկնակի գմբեթարդներով (ինչպես Անիից ոչ շատ հեռու Արագածի VI դ. վեցախորան եկեղեցում): Արտաքին պատերում, գմբեթի թմբուկում բավական ցայտուն բազմագունության հնարք է կիրառված՝ բաց և մուգ կարմրադարչնագույն քարերի գրեթե շախմատաձև շարվածքի միջոցով:*

*Անիի համեմատաբար ամենալավ պահպանված հուշարձանը Աբուգամրենց Ս. Գրիգոր եկեղեցին է, որը 980–982 թթ. կառուցել է իշխան Վահրամ Պահլավունին: Եկեղեցին կանգուն է Ծաղկոցաձորի կիրճի եզրին և ունի ութաբսիդ հորինվածք՝ պսակված կոնաձև վեղարով գլանաձև թմբուկով: Հատակագծում պայտաձև աբսիդներից արևելյանի՝ Ավագ խորանի երկու կողմում, պատերի շարվածքի հոծ զանգվածի մեջ տեղադրված են փոքրիկ ավանդատներ: Արտաքուստ պատերն ունեն եռանկյունաձև խորշեր, որոնք զարդարված են կիսասյունիկներով, կամարակապ շրջանակով: Ներսում, աբսիդների հպման անկյուններին կից, շքեղ խոյակներով կիսասյուների վրա գցված կամարները կրում են գմբեթը: Եկեղեցու ներսը սվաղված է, և նկատելի են որմնանկարների հետքեր: Հուշարձանի հյուսիսային կողմում Ն. Մառի պեղումներով բացվել են երկու փոքր մատուռ և դրանց միջև՝ Գրիգոր Պահլավունու դամբարանը: Անին թուրքական տիրապետությանն անցնելուց հետո եկեղեցու գմբեթի վրայից պոկել են խաչը, որի պատճառով քանդվել է վեղարի գագաթը:*

*Բագրատունյաց թագավորության օրոք Անիում կառուցված նշանակալից շենքերից է Ս. Առաքելոց եկեղեցին: Այն շինվել է 1024–1031 թթ. մայրաքաղաքի կենտրոնական մասում և, փաստորեն, մի համալիր է՝ բաղկացած բուն եկեղեցուց, նրա երեք գավիթներից ու կողքի մատուռից: Ինքնատիպ է եկեղեցու ծավալատարածական հորինվածքը. ներսից այն քառախորան է, չորս անկյուններում գմբեթավոր մատուռ-ավանդատներով, արտաքուստ քառակուսի հատակագծով կենտրոնագմբեթ կառույց է՝ հանդիսանալով Ավանի Կաթողիկեից (591 թ.) հետո երկրորդ հնգագմբեթ եկեղեցին: Ճակատները ողջ պարագծով զարդարված են դեկորատիվ կամարաշարով: Հարավային շքամուտքն իր ձևով և հարդարանքի տարրերով չափազանց նման է Մարմաշենի վանքի Կաթողիկեի (1029 թ.) գլխավոր՝ արևմտյան շքամուտքին, և, նկատի առնելով, որ երկուսի մեկենասները եղել են Պահլավունի իշխանները, ենթադրվում է երկու եկեղեցիներն էլ նույն ճարտարապետի կառուցածը լինելը: Կիսավեր պահպանվել է Ս. Առաքելոց եկեղեցու հարավային գավիթը (XII դ.), որի ծածկը խաչվող կամարների կիրառման վաղագույն օրինակներից է: Գավթի հարթ առաստաղը կազմված է սև ու կապույտ ներկած քարե սալերից: Գլխավոր՝ արևելյան ճակատի կենտրոնում սլաքաձև կամարով, շթաքարային մշակումով շքամուտքն է՝ երկու կողմերում զույգ խորշերով (այս հորինվածքը XX դ. նախօրինակ ծառայեց Երևանի Մատենադարանի գլխավոր ճակատի ճարտարապետության համար): Ս. Առաքելոց եկեղեցու գավիթը, ըստ երևույթին, Զաքարյանների իշխանության օրոք ծառայել է որպես քաղաքային իշխանությունների համար հավաքատեղի, որտեղ ընդունված,*

*Անիի բնակչության կյանքը կանոնակարգող բազմաթիվ հրամաններ և օրենքներ (ապահարկության, երկրաշարժից հետո փողոցներում առևտրի արգելման, ամուսնության ու ամուսնալուծման վերաբերյալ, նվիրատվական, կաշառակերությունը դատապարտող և այլն) փորագրվել են շենքի ներսում և արտաքին ճակատներին:*

** * **

*Անիի քաղաքաշինական կերպարում կարևորագույն դեր են խաղում միջնադարյան Հայաստանի հռչակավոր ճարտարապետ Տրդատի կառուցած կոթողային շենքերը: Նա իր ստեղծագործությունների թե՛ բարձր արվեստով, թե՛ քանակով բացառիկ տեղ է գրավում հայ մշակույթի պատմության մեջ: Հայ մյուս խոշոր ճարտարապետ, Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու կառուցող Մանուելը և Տրդատն այն եզակի արվեստագետներն էին, որոնք իրենց տաղանդի ուժով ստիպել են հայ պատմիչներին, աշխարհիկ և հոգևոր բարձրաստիճան մեկենասներին հիշելուց բացի, գրել նաև իրենց աշխատանքների մասին:*

*Տրդատի տաղանդը հիմնականում դրսևորվեց Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաքում, և այդ է պատճառը, որ մասնագիտական գրականության մեջ նրան անվանում են «Անիի գլխավոր ճարտարապետ»: Տրդատի ստեղծագործական կյանքը հանգամանորեն լուսաբանվել է բազմաթիվ հոդվածներում ու գրքերում, նրա մասին մենագրական առանձին ուսումնասիրություններ են գրվել:*

*Ժամանակագրական կարգով Տրդատի՝ մեզ հայտնի առաջին վավերական գործը Արգինայի Կաթողիկեն է, որը նա կառուցել է Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսի պատվերով (գահակալել է 973–992 թթ.):*

*Արգինայի Կաթողիկեի շինարարության ավարտից հետո Տրդատը հրավիրվեց Անի՝ Հայաստանի մայրաքաղաք, որտեղ նրան Սմբատ Բ Տիեզերակալը հանձնարարեց շատ պատասխանատու և պատվավոր գործ՝ կառուցել ամենայն հայոց Մայր տաճարը (ծրագրված էր կաթողիկոսությունը Արգինայից տեղափոխել Անի): Նրա օրոք Տրդատը հասցնում է միայն հիմնադրել Մայր տաճարը, որի շինարարությունը, սակայն, ընդհատվում է 989 թ. արքայի վաղահաս մահվան պատճառով: Դա համընկավ մի այլ իրադարձության հետ. ըստ Ստեփանոս Տարոնեցու՝ նույն թվականին (իսկ այլ աղբյուրների համաձայն՝ 986 թ.) երկրաշարժից կործանվում է համաշխարհային ճարտարապետության գլուխգործոց՝ Կոստանդնուպոլսի Սուրբ Սոֆիա տաճարի գմբեթը, և լուրջ վնասվում են շենքի պատերը: Սուրբ Սոֆիայի տաճարի նորոգման և նոր գմբեթի կառուցման գործն իրականացնում է Տրդատը: Թե ի՞նչ հանգամանքների բերումով էր Տրդատն այդ ժամանակ գտնվել Կոստանդնուպոլսում, հայտնի չէ: Սակայն Բյուզանդիայի մայրաքաղաքի Մայր տաճարի վերականգնման գործը Տրդատի կողմից իրականացնելը, հիրավի, այնքան բացառիկ է եղել, որ այդ իրադարձությանը ժամանակակից պատմիչ Ստեփանոս Տարոնեցին բավական մանրամասն անդրադառնում է դրան: Բյուզանդացի ժամանակագիրները նույնպես հիշատակում են այս փաստը՝ նշելով, որ 992 թ. «վերականգնվում է Մեծ*

*եկեղեցու գմբեթը: Ավերվելուց չորս տարի հետո այն վերականգնում է մի հայ ճարտարապետ»:*

*Տրդատը, Կոստանդնուպոլսում մեծ հռչակ ու համբավ ձեռք բերելով, 993 թ. վերադարձավ հայրենիք և ձեռնամուխ եղավ շարունակելու իր իսկ սկսած պատասխանատու աշխատանքը՝ Անիի Մայր տաճարի շինարարությունը:*

*Սմբատ Բ Տիեզերակալի հիմնադրած տաճարի կառուցումը շարունակեց և ավարտեց 1001 թ. նրա հաջորդի՝ Գագիկ Ա Բագրատունու կինը՝ Կատրանիդե թագուհին: Տրդատն Անիի Մայր տաճարը հիմնադրել էր քառամույթ գմբեթավոր բազիլիկի հորինվածքով: Անիի Մայր տաճարի համար ընտրելով ճարտարապետական հանրահայտ հորինվածքը՝ նա իր հզոր տաղանդով, նորարարական, սկզբունքային վերամշակումով իրականացրեց այն:*

Անիի Մայր տաճարը (989–1001 թթ., ճարտարապետ Տրդատ)

*Ի տարբերություն վաղ միջնադարի հայկական նույնատիպ եկեղեցիների, որոնց գմբեթը բարձրանում է աղոթասրահի կենտրոնում, Անիի Մայր տաճարում Տրդատն այն տեղադրել է ողջ շենքի գրեթե կենտրոնում՝ դրանով հավասարակշռելով վերջինիս արևելյան ու արևմտյան մասերը: Եվ, ավելի էական, միանգամայն նորովի, աննախադեպ նա ձևափոխեց շենքի հիմնական, կառուցողական տարրերը՝ գմբեթակիր մույթերը և կամարները, փոխեց գլխավոր ու կողային նավերի լայնության ու բարձրության*

*համաչափությունները, նորովի իրականացրեց ինտերիերի և արտաքին ճակատների հարդարանքը:*

*Անիի Մայր տաճարում կիրառված նորամուծությունները, որոնց նշանակությունը դուրս է գալիս միջնադարյան հայկական ճարտարապետության շրջանակներից, իրականացված են ինտերիերում: Բարձր, սլացիկ մույթերը ոչ թե վաղ քրիստոնեական գմբեթավոր բազիլիկներին բնորոշ խաչաձև են, այլ բացառիկ՝ շեղանկյունաձև են: Դրանք, ինչպես և որմնամույթերը, ջլատված են կիսասյունիկներով և ուղղանկյուն ելուստներով, որոնք վերևում փոխանցվում են գմբեթակիր կամարներին: Միջին նավը լայնացված է կողայինների հաշվին, որոնք գրեթե ձուլվում են նրա հետ: Կողային նավերն այնքան են նեղացվել, որ հետագայում դրանց միջով հավատացյալների անցումն ապահովելու համար նույնիսկ տաշել են մույթերի որմնախարիսխները:*

*Մայր տաճարի Ավագ խորանի գմբեթարդի, միջին նավի թաղակիր և, հատկապես, գմբեթակիր կամարները երկկենտրոն են՝ սլաքաձև: Գմբեթակիր կամարներն ունեն մոտ 20 մ բարձրություն՝ 6,5 մ լայնության դեպքում: Այս բոլորը տաճարի կամարներին սլացիկություն է հաղորդում, ողջ ինտերիերին՝ վեհություն:*

*Տրդատն ընդհանրապես մեծ ուշադրություն է դարձրել Մայր տաճարի արտաքին հարդարանքին: Եթե Արգինայում Կաթողիկեի ճակատները չափազանց զուսպ են ձևավորված, ապա Անիի Մայր տաճարը նա զարդարել է դեկորատիվ կամարաշարով՝ քաջ հայտնի վաղմիջնադարյան Հայաստանում, որի կիրառման հանրահայտ ու լավագույն օրինակը Զվարթնոցի տաճարն է: Սակայն Անիում Տրդատը մեծ տաղանդով հարդարանքի այս ձևը վերամշակել է. կիսասյունիկներն արդեն զույգ չեն, ինչպես Զվարթնոցում, այլ՝ մեկական ու ավելի նրբագեղ, ավելացված է կամարաշարի բարձրությունը, ճակատների միջին հատվածներում դրանց թռիչքը մեծացված է՝ շքամուտքերն ընդգրկելու համար:*

*Անիի Մայր տաճարի շքեղ հարդարանքն իրականացված է բարձր ճաշակով և չափի զգացումով. դեկորատիվությունն այստեղ հասնում է տրամաբանական այն սահմանին, որից անցնելը կդիտվեր արդեն որպես բացասական երևույթ, ծանրաբեռնվածություն:*

*Մայր տաճարի գմբեթն ավերված է, սակայն թմբուկի պահպանված ստորին մեկերկու շարքերը ցույց են տալիս, որ այն եղել է բազմանիստ (տարբեր վերակազմողների մոտ նիստերի քանակը տարբեր է), զարդարված կամարաշարով, սակայն արդեն զույգ կիսասյունիկներով, իսկ գմբեթի վեղարը եղել է բրգաձև: Իր առանձնահատկությունների, կառուցվածքային կատարելության և գեղաշուք հարդարանքի շնորհիվ Անիի Մայր տաճարը դասվում է համաշխարհային ճարտարապետության լավագույն ստեղծագործությունների թվին:*

*Մայր տաճարի շինարարության ավարտից անմիջապես հետո Գագիկ Ա Բագրատունին Տրդատին հանձնարարեց Անիում կառուցել X դ. ավերված Զվարթնոցի տաճարի կրկնօրինակը: Հավանական է, որ թե՛ արքան և թե՛ ճարտարապետը տեսել էին Զվարթնոցը կանգուն վիճակում, որը մեծ*

*տպավորություն էր թողել Գագիկ Ա-ի վրա և դյուրացրել Տրդատի գործն այդ պատասխանատու պատվերը կատարելիս:*

*«Ս. Գրիգոր» անվամբ օծված այս նոր տաճարը կառուցվեց 1001–1010 թթ. (նրա ստեղծման նախաձեռնողի անվամբ այն այժմ ուղղակի կոչվում է «Գագկաշեն»): Տրդատը ոչ թե ուղղակի կրկնեց Զվարթնոցը, այլ զգալի փոփոխություններ կատարեց: Նա Գագկաշենի առաջին հարկաբաժնի պատն իրականացրել է 36 նիստով (ոչ թե 32)՝ դրանով իսկ պատի եզրագիծն ավելի մոտեցնելով բոլորակի: Զվարթնոցի հինգ մուտքերի փոխարեն այստեղ միայն երեք են, բոլոր չորս խորաններն էլ սյունազարդ են (նույնպես վեցական սյուներով): Զվարթնոցում առկա ուղղանկյուն մեծ կցակառույցի փոխարեն Գագկաշենում արևելքում կից է աբսիդով փոքրիկ մատուռանման ծավալ:*

*Տրդատը վերամշակել է նաև հարդարանքը. Զվարթնոցի կառուցումից անցել էր երեք դար, հայկական արվեստում առաջնորդվում էին գեղագիտական այլ սկզբունքներով: Զվարթնոցյան բուսական մոտիվները Գագկաշենի հարդարանքում այնքան են ոճավորված, որ գրեթե երկրաչափական զարդաքանդակ են դարձել: Հիմնական փոփոխության են ենթարկվել նաև խոյակները. զամբյուղաձև ու արծվաքանդակ խոյակների փոխարեն Տրդատը կիրառել է գնդաձև խոյակներ՝ աբակի տակ եռյակ խոյոններով: Գագկաշենում ողջ հորինվածքի ուղղաձիգությունը, վերասլացությունն ավելի է շեշտված, կիսասյունիկները նրբացված են, դեպի վեր ձգված:*

Ս. Փրկիչ եկեղեցին (1036 թ., ճարտարապետ Տրդատ)

*Գագկաշենի պեղումներից ամենահետաքրքիր գտածոն Գագիկ Ա Բագրատունու տուֆակերտ արձանն է: Նա քանդակված է կանգնած, տաճարի մանրակերտը ձեռքին: Այն կից է եղել տաճարի հյուսիսային պատին: X դ.*

*հայկական եկեղեցիներում մանրակերտները բռնած կտիտորների պատկերաքանդակները նորույթ չէին: Սակայն դրանք հարթաքանդակ կամ բարձրաքանդակ են, իսկ Գագկաշենում՝ բոլորաքանդակ, իր տեսակի մեջ միակը ողջ միջնադարյան հայ արվեստում: Քանդակում ճշգրիտ պահպանված են համաչափությունները, տրված են մանրամասները: Արքան պատկերված է իր «Շահնշահ» տիտղոսին համապատասխան փաթթոցաձև թագով, պարզ, երկար պատմուճանով, կրծքին կախված խաչով: Քանդակը ներկված է. դեմքը և հագուստը՝ կարմիր, բեղերը և մորուքը՝ սև, թագը՝ սպիտակ: Հայ արվեստի պատմության համար կարևոր է Գագիկի դիմապատկերը: Այն կերտված է ոչ թե պայմանական, իդեալականացված դիմագծերով, այլ որոշակի անձնավորության կերպարով, օժտված անհատականությամբ: Հետևաբար, այս քանդակում առկա է հայ թագավորներից մեկի իրական դիմապատկերի եզակի օրինակը:*

*Գագկաշեն Ս. Գրիգոր տաճարն իր բարձրադիր տեղադրությամբ, սլացիկ ծավալով գերիշխող դիրք ուներ Անիի կառուցապատման մեջ: Անիի համայնապատկերում խոշոր և իրենց նշանակությամբ կարևոր երկու կառույցներ են շեշտվում, որոշիչ և կազմակերպիչ դեր խաղում մայրաքաղաքի գլխավոր հատակագծում՝ Մայր տաճարը և Գագկաշենը, Տրդատի երկու ստեղծագործությունները:*

*Անիում Տրդատի կառուցած երրորդ եկեղեցին հանդիսանում է Սուրբ Փրկիչը (1036 թ.), որի մուտքից վերև եղել է մեծադիր տառերով փորագրված «ՏՐԴԱՏ» անունը: Իր գեղարվեստական կերպարով Ս. Փրկիչ եկեղեցին առանձնանում է Անիի բազմաթիվ հուշարձանների շարքում: Այն պատկանում է դեռևս վաղ միջնադարում հայ ճարտարապետության մեջ հայտնի բազմաբսիդ կենտրոնագմբեթ եկեղեցիների տիպին:*

*Ս. Փրկիչ եկեղեցին ութաբսիդ է, արտաքուստ՝ 19 նիստանի: Աբսիդների փոքր խորության և գմբեթի տրամագծի խոշորության շնորհիվ ստացվել է ներքին ծավալի միասնություն, որն արտահայտվել է կառույցի արտաքին կերպարում ևս: Արևելյան՝ Ավագ խորանը մյուսներից զգալի մեծ է և երկու կողքին՝ պատի զանգվածի մեջ, ունի խորշ-ավանդատներ: Միակ մուտքը հարավից է: Արտաքուստ պատերը և գմբեթի թմբուկը զարդարված են զույգ կիսասյունիկներով դեկորատիվ կամարաշարով, որը եկեղեցու կերպարին նրբագեղություն և արտահայտչականություն է հաղորդում: Եկեղեցու ներսը 1193 թ. նկարիչ Սարգիս Փարչիկը զարդարել է ավետարանիչներին պատկերող որմնանկարներով:*

*1958 թ., անխնամ մնալու հետևանքով, եկեղեցու կեսն ամբողջությամբ ավերվեց, և հուշարձանն այժմ վթարային վիճակում է:*

*Տրդատ Անեցին իր ստեղծագործություններով միջնադարի հայ ճարտարապետության մի ամբողջ փուլ նշանավորեց: Նրա ստեղծագործությունները դեռ XIX դ. դարձել են օտարազգի արվեստագետների ուսումնասիրության առարկա: Տրդատի գլուխգործոց Անիի Մայր տաճարը հատկապես բարձր է գնահատում ավստրիացի նշանավոր արվեստաբան ու ճարտարապետության պատմության մասնագետ Յո. Ստրժիգովսկին: Իր «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան» հիմնարար, կոթողային մենագրությունում նա առանձին ենթագլուխներ է հատկացրել ինչպես*

*Տրդատին, այնպես էլ Անիի Մայր տաճարին: Ստրժիգովսկին գրում է. «Անիի տաճարը իր տիպով գտնվում է հայկական և ռոմանա-գոթական ճարտարապետության սահմանագծին: Ճարտարապետական հիմնական իր մտահղացումով այն անցումային տիպ է դեպի վերջինս: Պետք է խոստովանել, որ այն միանգամայն գտնվում է հայկական ճարտարապետության զարգացման վաղքրիստոնեական շրջանակում և օտար ոչինչ չի ազդել հորինվածքի ապշեցնող միասնության վրա»:*

* * *

*Անիի ճարտարապետության երկրորդ վերելքը տեղի ունեցավ XIII դ. առաջին տասնամյակներին՝ Զաքարյանների իշխանապետության մայրաքաղաք դառնալուց հետո:*

*Ախուրյան և Անի գետերի միախառնումից ստացվող, մոտավորապես եռանկյունաձև հրվանդանի հարավարևմտյան եզրին՝ Միջնաբերդից ներքևի բարձունքում, դեռ Կամսարականների ժամանակից պահպանված Ներքին բերդ («Աղջկաբերդ») փոքրիկ ամրոցը, որը գոյատևել է Բագրատունիների օրոք, Զաքարյանների կողմից վերակառուցվեց: Աշտարակներով զորացված պարիսպներով շրջապատված տարածքում գտնվում է այսօր կիսավեր (քանդված է հարավային մասը և արևմտյան ճակատի կեսը) Զաքարե ամիրսպասալարի XIII դ. կառուցած Ս. Աստվածածին եկեղեցին: Այն XII–XIII դդ. հայկական եկեղեցական ճարտարապետությունում տարածված հորինվածք ունի՝ ներսից խաչաձև, չորս անկյուններում ավանդատներով, արտաքուստ ուղղանկյուն, շենքի կենտրոնում բարձրացող գմբեթով (այժմ՝ ավերված): Մուտքերը երկուսն են՝ արևմուտքից և հարավից: Արևմտյան և հարավային ճակատները զարդարված են գույգ կիսասյունիկներով դեկորատիվ կամարաշարով:*

*Ճոխ և նրբին կատարումով զարդաքանդակներով են մշակված կամարաշարի խոյակները, խարիսխները, եկեղեցու քիվը, լուսամուտների հոնքաձև պսակները: Իսկ մյուս երկու ճակատները, որոնք քարաժայռի եզրին են և մոտեցման ու դիտման համար անմատչելի, զուրկ են այդ հարդարանքից:*

*Զաքարյանների իշխանության օրոք Անիում առաջացավ մեկենասների նոր խավ՝ միջազգային առևտրով հարստացած բարերարներից բաղկացած, որոնց միջոցներով քաղաքում կառուցվեցին ոչ միայն աշխարհիկ շենքեր (պալատներ, հյուրանոցներ, կրպակներ և այլն), այլև եկեղեցիներ ու վանքեր: Դրանց թվում անվանին և Անիի զարգացմանը մեծ նպաստ բերածը Տիգրան Հոնենցն էր, որը քաղաքի հարավարևելյան կողմում՝ Ախուրյանի կիրճի եզրին մոտ, ըստ ընդարձակ շինարարական արձանագրության, 1215 թ. կառուցեց Ս. Գրիգոր ոչ մեծ վանքը: Իր ճարտարապետական-գեղարվեստական բարձր հատկանիշների շնորհիվ այն դարձավ XIII դ. հայ արվեստի գլուխգործոցներից: Տիգրան Հոնենցը վանքին նվիրաբերեց ոսկուց, արծաթից, թանկագին քարերով զարդարված իրեր (խաչեր, կանթեղներ, նշխարատուփեր), ինչպես նաև գյուղեր, Անիում՝ պանդոկներ, հյուրատներ, կրպակներ, բաղնիքներ, Հայաստանի տարբեր վայրերում՝ բազմաթիվ այգիներ (որոնց թվում Երևանում, Օշականում, Արուճում):*

*Վանքի եկեղեցին (գրականության մեջ «Ս. Գրիգոր Տիգրան Հոնենցի» անվանվող) պատկանում է գմբեթավոր դահլիճի այն ենթատիպին, որի արևելյան որմնամույթերը համատեղված են Ավագ խորանի անկյունների հետ: 16 նիստանի, սլացիկ, կոնաձև վեղարով գմբեթը բարձրանում է եկեղեցու ծավալային հորինվածքի կենտրոնում: Չորս ճակատներն էլ ակոսված են զույգ, եռանկյունաձև խորշերով: Եկեղեցու արևելյան մասում՝ համեմատաբար փոքր խորանի առջև, ընդարձակ դասն է, որտեղից մուտքեր են բացվում դեպի ուղղանկյուն, առանց աբսիդների ավանդատները: XIII դ. Տիգրան Հոնենցի եկեղեցու արևմտյան ճակատի առջև կառուցել են վեցասյուն, կամարներով բաց սրահ-գավիթ, իսկ վերջինիս հյուսիսից կից՝ թաղածածկ մատուռ:*

Ս. Գրիգոր Տիգրան Հոնենցի եկեղեցին (XIII դ.)

*XIII դ. տարածված հորինվածք ունենալու դեպքում Ս. Գրիգոր Տիգրան Հոնենցի եկեղեցին առանձնանում է այդ ժամանակաշրջանի հայկական հուշարձաններից իր արտակարգ ճոխ ու բարձրարվեստ և՛ արտաքին, և՛ ներքին հարդարանքով: Այստեղ ևս արտաքին ճակատների ձևավորման համար կիրառված է Անի ճարտարապետական-գեղարվեստական դպրոցի հիմնական հնարքը՝ զույգ կիսասյունիկներով դեկորատիվ կամարաշարը, որը հայտնի էր VII դարից և վերամշակվել էր X–XI դդ.՝ կատարելության հասնելով հատկապես Տրդատ Անեցու ստեղծագործություններում:*

*Տիգրան Հոնենցու եկեղեցում կամարաշարով զարդարված են ինչպես եկեղեցու բոլոր չորս ճակատները, այնպես էլ գմբեթի թմբուկը: Շքեղ, նրբին զարդաքանդակներով հարդարված են կամարաշարի խոյակները (երկրաչափական) և կամարները (հյուսածո): Սակայն առավել արժեքավորը կամարամիջոցների (անտրեվոլտ) քանդակներն են: Այստեղ ոճավորված*

*բուսական զարդամոտիվների ֆոնի վրա պատկերված են հուշկապարիկներ, թռչուններ, եզներ, այծյամին հետապնդող առյուծ, հովազներ, ճանկերում զոհ բռնած արծիվ, աքաղաղներ: Արտակարգ ճոխ է ձևավորված եկեղեցու գլխավոր՝ արևմտյան մուտքը, լայն և նրբագեղ երկրաչափական զարդաքանդակներով՝ լուսամուտները: Գմբեթի նիստերին կան արծվի, վարդյակների քանդակներ, և ուշագրավ է, որ վերջիններս կամարաշարի նկատմամբ միանգամայն ասիմետրիկ են տեղաբաշխված:*

*Պեղումներով գտնվել է Տիգրան Հոնենցի եկեղեցու մանրակերտը, որը ընդհանուր գծերով համապատասխանում է կառույցի ճարտարապետությանը:*

*Տիգրան Հոնենցի եկեղեցու արտաքին հարդարանքը, բնույթը, դեկորատիվ տարրերի ասիմետրիան հանդիսանում են XIII դ. Հայաստանի ճարտարապետական-գեղարվեստական կյանքում ձևավորված «գեղատեսիլ ոճի» բնորոշ գծերը: Այդ ոճն արդյունքն էր քաղաքային կյանքի, մշակույթի աշխարհականացման, որն իր առավել ցայտուն և մշակված արտահայտությունն ունեցավ Անիի ճարտարապետական կառույցներում:*

*Ս. Գրիգոր Տիգրան Հոնենցի եկեղեցու ներսը, ինչպես և սրահ-գավիթը XIII դ. երկրորդ կեսում ամբողջովին ծածկվել են որմնանկարներով՝ կատարված աստվածաշնչյան, պատմական, Գրիգոր Լուսավորչի վարքին նվիրված թեմաներով: Գմբեթում «Համբարձումն» է, ավելի ներքև՝ Աստվածածինը՝ շրջապատված հրեշտակներով ու առաքյալներով, թմբուկին՝ մարգարեներ, առագաստներին՝ չորս ավետարանիչներ, Ավագ խորանում՝ «Դեիսուսը», ավելի ցած՝ «Հաղորդությունը», «Եզեկիելի տեսիլքը», դրանից ներքև՝ հայ եկեղեցու պատմության հետ կապված սրբերը:*

*Եկեղեցու և սրահ-գավթի մյուս որմնանկարները նվիրված են երկու հիմնական թեմատիկ խմբերի՝ Գրիգոր Լուսավորչի վարքին և տոների շարքին: Որմնանկարների բնույթը ցույց է տալիս, որ եկեղեցին, փաստորեն, նվիրված է Հայաստանում քրիստոնեության ընդունմանն ու հաստատմանը: Որմնանկարների հեղինակները եղել են ոճական տարբեր ավանդույթների հետևողներ, ու արդյունքում ստացվել է հայկական միջնադարյան կերպարվեստի ինքնատիպ հուշարձան: Բարձրարվեստ քանդակների և որմնանկարների շնորհիվ Տիգրան Հոնենցի եկեղեցին հանդիսանում է XIII դ. հայ ճարտարապետության մեջ արվեստների սինթեզի գլուխգործոց:*

*Անիում «գեղատեսիլ ոճին» պատկանող հուշարձաններից է նաև Կուսանաց վանքը (XIII դ.), որի կառուցումը վերագրվում է Տիգրան Հոնենցին: Պարսպով շրջապատված փոքրիկ համալիրը տեղադրված է Ախուրյանի կիրճի թեք լանջին՝ ցածրում՝ բավական դժվարամատչելի տեղում, և բաղկացած է վեցախորան կենտրոնագմբեթ եկեղեցուց, նրան կից գավիթ-սրահից, առանձին կանգնած միանավ թաղածածկ մատուռից և այսօր ամբողջովին ավերակ մի քանի աշխարհիկ շենքերից: Արտաքուստ կիսագլանաձև ծավալներով աբսիդները վերևում «գրկում են» բարձր, հովհարաձև վեղարով պսակված, բազմանիստ թմբուկով գմբեթը, ու արդյունքում ստացվում է ծավալատարածական սլացիկ հորինվածքով կառույց՝ նրբագեղ դեկորատիվ կամարաշարով զարդարված արտաքին ճակատներով:*

*Գմբեթի թմբուկի զույգ կիսասյունիկներով նիստերն ավարտվում են եռանկյունաձև ճակտոններով և ցցուն, զիգզագաձև քիվով: Եկեղեցու փոքր չափերի պատճառով կամարամիջոցներում հնարավոր չի եղել պատկերաքանդակներ տեղադրել և ճարտարապետը (ենթադրվում է Ս. Գրիգոր Տիգրան Հոնենցի եկեղեցին կառուցողը) բավարարվել է միայն բուսական զարդաքանդակներ տեղադրելով: Միայն թմբուկի եռանկյունաձև ճակտոններին կան թռչունների ոճավորված քանդակներ: Կուսանաց վանքի՝ զարդատուփ հիշեցնող այս գողտրիկ եկեղեցին Անիի «գեղատեսիլ ոճի» առանձնահատկությունների լավագույնս արտահայտող հուշարձանն է:*

*Քաղաքի հյուսիսում, Սմբատյան պարիսպներից ոչ հեռու, Ն. Մառի պեղումներով բացվել է Ս. Գրիգոր Բախտագեկի եկեղեցին, որը, ըստ շինարարական արձանագրության, 1271 թ. կառուցել է Շահեր վարդապետը (ճարտարապետը): Պահպանված ավերակները բավարար են եղել Թ. Թորամանյանի կողմից դրա լրիվ վերակազմությունը կատարելու համար: Եկեղեցին պատկանել է գմբեթավոր դահլիճի տիպին ու իր դեկորատիվ հարդարանքով շատ նման Կուսանաց վանքին և Ս. Գրիգոր Տիգրան Հոնենցի եկեղեցուն, նույնիսկ իր շքեղությամբ վերջինիս գերազանցելով: Այստեղ ևս ճակատները զարդարված են եղել զույգ կիսասյունիկներով դեկորատիվ կամարաշարով, բուսական և երկրաչափական ֆոնի վրա՝ կենդանակերպ քանդակներով, ընդ որում զարդաքանդակներով են ծածկված եղել եկեղեցու ճակտոնները և անկյուններում՝ քիվերի տակ, պատերի եռանկյունաձև հատվածները: Մուտքի տիմպանին քանդակած է «Բարեխոսությունը» (Քրիստոսի և երկու կողքին Հովհաննես Մկրտչի ու Աստվածածնի կիսանդրիները), իսկ ներսը, ինչպես և Տիգրան Հոնենցի եկեղեցում, ամբողջովին ծածկված է բարձրարվեստ որմնանկարներով՝ աստվածաշնչյան և հայ եկեղեցու պատմությանն առնչվող թեմաներով:*

*Պեղումներով Աշոտյան պարիսպներից հյուսիս բացվել է XIII դ. կառուցված Աստվածամոր եկեղեցին՝ հատակի տակ դամբարանով: Այս առանձնահատկությունն ունի նաև Անիի հյուսիսային մասում գտնվող վրացական միանավ, բազիլիկ եկեղեցին (XIII դ. սկիզբ)՝ զույգ թաղակիր կամարներով, աղոթասրահի տակ թաղածածկ խոշոր տապանատնով (այսօր պահպանվել է միայն եկեղեցու հյուսիսային պատը):*

*Անին եկեղեցիներ է ունեցել նաև արվարձաններում՝ Սմբատյան պարիսպներից դուրս: Դրանք հիմնականում մատուռներ են, առանձնանում է Կարմիր վանքը Գայլիձորում, որը կառուցվել է 985 թ. (նորոգվել է 1271 թ.) մայրաքաղաքի պարիսպներից դուրս՝ արվարձանում:*

*XX դ. սկզբին գրեթե ամբողջովին պահպանվել էր հիրավի եզակի ճարտարապետությամբ մի եկեղեցի՝ ժողովրդական ավանդությունից ծագող «Հովվի» անունով (այսօր միայն հետքն է մնացել): XI դ. վերագրվող այս ոչ մեծ եկեղեցին դեռևս կանգուն վիճակում ուսումնասիրած Թ. Թորամանյանն այն բնութագրում է որպես զվարթնոցյան հորինվածքի մի ինքնատիպ վերաստեղծում: Հովվի եկեղեցին երկհարկ, եռայարուս ոչ մեծ եկեղեցի է, որի առաջին հարկը հատակագծում ներսից ունի վեցթևանի աստղի ձև՝ դրսից շրջանագծի մեջ ներառված տասներկու եռանկյունաձև խորշերով: Երկրորդ հարկը ներսից գլանաձև է, արտաքուստ՝ վեցանկյուն*

*զուգահեռանիստ, որի անկյունները մշակված են կիսաշրջանաձև խորշերով: Եկեղեցին պսակված է կոնաձև վեղարով ու գլանաձև թմբուկով գմբեթով: Այս գողտրիկ հուշարձանի ծավալատարածական հորինվածքն ունի չափազանց ինքնատիպ կերպար: Դրանից բացի, Հովվի եկեղեցին ունի նաև առաջին հարկաբաժնի ծածկի կոնստրուկտիվ լուծման բացառիկ հնարամիտ ու անսպասելի ձև: Այն բաղկացած է որմնասյուների զագաթից դեպի կենտրոն ճառագայթաձև ուղղված վեց կամարներից, որոնք առաստաղի կենտրոնում հենվում են փակակալ քարին, և ստացվում է օդում կախված ծածկի տպավորություն: Այս ամենի շնորհիվ Հովվի եկեղեցին իր ճարտարապետական-գեղարվեստական արժանիքների և կոնստրուկտիվ առանձնահատկությունների շնորհիվ իր պատվավոր տեղն ունի զարգացած միջնադարի հայկական շինարարական արվեստում:*

*Վաղմիջնադարյան Հայաստանի աշխարհիկ ճարտարապետությունից Անիում գրեթե ոչինչ չի պահպանվել: Պեղումներով բացվել են իշխանական և կաթողիկոսական միայն մի քանի ոչ մեծ համալիրների հիմնապատերը: Ի տարբերություն դրա, քաղաքում XX դ. սկզբին կիսավեր պահպանվել էին թագավորական պալատը Միջնաբերդում, մեծահարուստների պալատական շենքերը քաղաքում, հյուրատներ, արտադրական, կոմունալ նշանակության շենքեր և այլն: Դրանց շարքում իր ճարտարապետությամբ ուշագրավ է թագավորական պալատի խոշոր համալիրը՝ 4900 մ² մակերեսով: Բագրատունիներից հետո պալատը ծառայել է Անիի նոր տիրակալներին, որի ընթացքում բազմիցս վերանորոգվել և վերակառուցվել է: Պալատն արևելքից արևմուտք ձգվող, 59 մ երկարությամբ միջանցքով բաժանվում է երկու մասի, որոնցից հյուսիսայինում գտնվում են երեք խոշոր դահլիճներ՝ իրենց դիրքով ու չափերով գերիշխող պալատական համալիրում: Դրանցից արևմտյան, ուղղանկյուն, խոշոր (21,0 x 10,5 մ) դահլիճից տեսք է բացվում դեպի քաղաքի համայնապատկերը, միջինից՝ դեպի Գագկաշեն տաճարը, իսկ բազիլիկատիպ արևելյանից՝ դեպի Մայր տաճարը: Այս վերջինը եղել է ամենաշքեղ հարդարվածը, ունեցել է ոսկեզօծ գիպսե զարդաքանդակներ, պարտեզների, հեծյալների պատկերներով որմնանկարներ:*

*Համալիրի հյուսիսային մասում գտնվում է նաև պալատական բաղնիքը, իսկ հարավային մասում տեղաբաշխված են տնտեսական, օժանդակ շինությունները, խոշոր ջրավազան, նաև Կամսարականների ժամանակաշրջանից պահպանված եկեղեցին:*

*Անիի համայնապատկերում իր չափերով և ճարտարապետությամբ առանձնացող աշխարհիկ շենքը XIII դ. Զաքարյանների պալատն է՝ սրբատաշ տուֆով կառուցված Ծաղկոցաձորի կիրճի եզրին: Գրականության մեջ այն հայտնի է «Պարոնի պալատ» անունով: Կիրճի կողմից եռահարկ այս խոշոր շենքը վերին հարկերում ունի դահլիճներ և փայտածածկ հարթ առաստաղներով սենյակներ, իսկ ստորին հարկի միջանցքներն ու սենյակները թաղածածկ են: Հատակագծային հորինվածքի կենտրոնում քառակուսի (10 x 10 մ) ներքին բակն է (կամ սրահը)՝ շուրջը դասավորված սենյակներով: Ենթադրվում է, որ ազատագրված Հայաստանին իշխող Զաքարյանների այս պալատն իր բնակելի նշանակությունը զուգակցում է*

*հասարակականի հետ՝ ունենալով նաև քաղաքապետարանի դեր, ընդունված որոշումները հայտարարելու համար նախատեսված լոջիայով: Պալատի՝ դեպի առջևի հրապարակն ուղղված ճակատի երկհարկ շքամուտքն ունի աչքի ընկնող, արտակարգ ճոխ ձևավորում. ներքևում՝ դռան բացվածքի շուրջը, երեսպատված է աստղաձև քանդակազարդ քարերով, իսկ վերևում խոշոր լուսամուտը շրջապատված է շախմատաձև շարվածքով: Վերջին տարիներին թուրքական իշխանությունները վերակառուցել են պալատը՝ մի շարք անճշտություններով ու աղավաղումներով:*

*Գագկաշենից հյուսիս-արևմուտք գտնվում են մեկհարկանի պալատի ավերակներ, որի շքամուտքն իր ձևավորումով կրկնում է Պարոնի պալատի շքամուտքը, միայն այստեղ՝ դռան ուղղանկյուն բացվածքի շուրջը, երեսպատված է վեց ճառագայթանի կարմիր աստղերով ու սև շեղանկյունիներով: Աստղերից մեկում պահպանվել է պալատի տիրոջ՝ Սարգսի անունը: Ենթադրվում է՝ նա Անիի արքեպիսկոպոս Սարգիս Ա-ն է (1209–1211 թթ.):*

*Պեղումներով բացվել են մի երրորդ պալատի հիմքեր, որը պատկանել է Պահլավունիների տոհմից՝ Աբլղարիբին:*

*Հայ ճարտարապետությունում Անիի հասարակական շենքերից նորարարական են հյուրատները: Միջնադարյան քարավանատների փոխարեն այստեղ քաղաքատիպ հյուրանոցներ են կառուցվել, որոնք ունեն այդ ժամանակաշրջանի համար առաջադիմական հորինվածք: Ս. Առաքելոց եկեղեցու մոտ պահպանվել են միմյանց կից երկու հյուրատան ավերակներ: Դրանք երկհարկանի են, դեպի վեր տանող քարե բարձակային աստիճաններով, ջրավազանով՝ երկարավուն բակի երկու կողմում, միջանցք-պատշգամբից մուտք ունեցող, պատերի երկայնքով դասավորված 9-ական ուղղանկյուն (2,5 x 5,0 մ) թաղածածկ սենյակներով (ընդհանուր 36 «համար» ու ևս չորս, ավելի խոշոր, օժանդակ սենյակ): Հյուրատների գլխավոր ճակատներն ունեն մեկական երկհարկ շքամուտք՝ իրենց ճոխ ձևավորումով նման Պարոնի պալատի շքամուտքին:*

*Անիի աշխարհիկ շենքերի շարքում առանձնահատուկ տեղ է գրավում Հին քաղաքում, Աշոտյան պարսպին մոտ, Ախուրյանի ձորի եզրին գտնվող կառույցը, որը գրականության մեջ հայտնի է «Մանուչեի մզկիթ» անունով: Այն երկհարկ է՝ բաղկացած բազմասենյակ ներքնահարկից և երեք գույգ սյուներով բազիլիկ տիպի դահլիճով (18,5 x 15,7 մ ներսի չափերով) վերին հարկից: Հարկերը հաղորդակցվում են միմյանց հետ փայտե աստիճաններով: Դահլիճի չորս խոշոր պատուհաններից տեսարան է բացվում դեպի Ախուրյանի գեղատեսիլ ձորը: Դահլիճում կիրառված են շթաքարային (ստալակտիտային) փոխանցումներով, կարմիր ու սև գույնի քարերով խճանկարային հարթ առաստաղներ: Շենքը կառուցվել է XI դ. և 1072 թ. Անիի մահմեդական տիրակալ Մանուչեի կողմից վերափոխվել մզկիթի, որի համար դրա հյուսիսարևմտյան անկյունում կցել են ութանիստ, բարձր մինարեթ:*

*Շենքի սկզբնական նշանակության մասին կան տարբեր կարծիքներ, սակայն, հավանականն այն կաթողիկոսարան լինելն է:*

*Անին ունեցել է միջնադարյան խոշոր քաղաքին բնորոշ և անհրաժեշտ առևտրական բազմաթիվ շենքեր, արտադրական կառույցներ (հիմնականում՝*

*ձիթհաններ, ձորերում՝ ջրաղացներ), քաղաքային բաղնիքներ և այլն: Հայտնի է մեծահարուստ և մեկենաս Տիգրան Հոնենցի կառուցած խոշոր բաղնիքը՝ ուղղանկյուն պատերի մեջ պարփակված օժանդակ ու սպասարկող մասերով: Սպասարկող մասը բաղկացած է կենտրոնական, քառակուսի գմբեթածածկ հանդերձարանից՝ չորս կողմից կից թաղածածկ սրահներով, որոնցից մեկը դրսից դուռ ունի: Շենքի չորս անկյուններում տեղավորված են գմբեթածածկ լողարանները, որոնք մուտք ունեն հանդերձարանից: Իր հորինվածքով սա էապես տարբերվում է Հայաստանի միջնադարյան բաղնիքներից և հանդիսանում է քաղաքային կյանքի ու կենցաղի բնորոշ արտահայտությունը հայկական ճարտարապետության մեջ:*

*Անիի տեղադրությունը երկու գետերի միջև կամուրջների կառուցման անհրաժեշտություն է առաջացրել: Հայտնի են դրանցից չորսը՝ շինված դեռևս Բագրատունիների օրոք: Ծաղկոցաձորի երկու կամուրջն ունեցել են փայտե գերաններով հեծանային ծածկ, Ախուրյանի երկու կամուրջներից մեկի կամրջախելերի հետքերն են մնացել, իսկ մյուսը՝ ամենախոշորը, Կուսանաց վանքից հյուսիս, 30 մ-ից ավել թռիչք ունեցող թաղով, կառուցված է սրբատաշ տուֆով, կրաշաղախով: Ըստ Թ. Թորամանյանի վերակազմության, հիմնական հենարաններից մինչև ափի խելերն ընկած տարածությունն ունեցել է փայտե շարժական ծածկ, որը թշնամու մոտեցման ժամանակ պաշտպանվողները վերցրել են: Իսկ հիմնական հենարանների վրա եղել են ամուր դարպասներով երկհարկանի շենքեր: Այս վերնաշենքերը միջազգային առևտրի խոշոր հանգույց Անիի համար ծառայել են որպես մաքսատուն:*

*Անիի տնտեսական ոլորտի մեջ են մտել շրջակա բնակավայրերը, իսկ հոգևոր և մշակութային ոլորտի մեջ՝ մոտակա Հոռոմոս, Բագնայր, Խծկոնք վանքերը:*

*Հոռոմոսի վանքն Անիի հետ կապված է հաղթակամարի նմանվող դարպասի տակով անցնող հանդիսավոր ճանապարհով, որով մայրաքաղաքում վախճանված հայ թագավորների դին տեղափոխում էին Հոռոմոսի վանք՝ Բագրատունիների տապանատունը: Վանքը գտնվում է Անիից հյուսիս-արևելք, բավական մոտ Ախուրյան գետի աջ ափին (այժմ Թուրքիայի սահմաններում) և բաղկացած է շինությունների երկու խմբից: Բարձրադիր վայրում համալիրի հնագույն՝ գմբեթավոր դահլիճի հորինվածքով Ս. Մինաս (930–953 թթ.) և Ս. Գևորգ (1013-ից հետո) եկեղեցիներն են ու Աշոտ Գ Բագրատունի թագավորի դամբարանը: Ձորում գտնվում է վանքի համալիրի հիմնական խումբը՝ գմբեթավոր դահլիճի տիպի Ս. Հովհաննես եկեղեցին (1038 թ.) և դրան արևմուտքից կից քառասյուն, կենտրոնակազմ, սյունազարդ գմբեթով գավիթը, որի հորինվածքը նախատիպ դարձավ XII–XIII դդ. հայկական գավիթների ու ժամատների մեծ մասի համար: Ս. Հովհաննես եկեղեցուն հարավից կից է իշխանուհի Ռուզուքանի երկհարկ դամբարանը (1215 թ.): Համալիրի կազմում են նշխարատներ (1229 և 1277 թթ.) և գրապահոց-գրատունը: XX դ. սկզբին կանգուն վանքն այսօր ավերակ է:*

*Բագնայրի վանքն Անիից արևմուտք է՝ Արջո Սլաջա լեռան հյուսիսային ստորոտում (Թուրքիայի տարածքում): Գլխավոր՝ Ս. Աստվածածին եկեղեցուն արևմուտքից կից է կենտրոնակազմ, քառասյուն գավիթը (երկուսն էլ XI դ.), իսկ դեպի հարավ-արևելք՝ երկու փոքր, գմբեթավոր եկեղեցիներ, որոնցից հարավայինը՝ Ս. Գրիգոր եկեղեցին, կառուցված է 1145 թ.: Այս հուշարձաններն այժմ ավերված են, պահպանվել է համալիրից 400 մ հյուսիս Ս. Երրորդություն եկեղեցին (XI դ.), որը արտաքուստ վեցանիստ է, ներսից հնգախորան՝ արևմտյան ուղղանկյուն թաղածածկ խորշով:*

*Համեմատաբար հեռու է Խծկոնքի վանքը (X–XI դդ.), որը գտնվում է Կարսից հարավ-արևելք՝ Տեկոր գետակի ապառաժոտ ձորափին: Կազմված է հինգ եկեղեցիներից, որոնցից Ս. Կարապետը, Ս. Աստվածածինը, Ս. Ստեփանոսը, Ս. Սարգիսը կառուցված են միմյանց մոտ, իսկ Ս. Լուսավորիչը՝ դրանցից 100 մ արևելք: 1962 թ. պայթեցրել են վանքի բոլոր եկեղեցիները և համալիրից վթարային վիճակում մնացել է միայն Ս. Սարգիս եկեղեցին (1027 թ.)՝ քառախորան, չորս անկյուններում ավանդատներով, արտաքուստ քսան նիստանի կենտրոնազմբեթ հորինվածքով, դեկորատիվ կամարաշարով զարդարված:*

* * *

*Անիի կառուցապատման և ճարտարապետական զարգացման հազարամյա պատմությունը (թեպետ անավարտ պեղումների պատճառով շատ հարցեր դեռ չեն լուսաբանվել) չափազանց կարևոր է հայկական միջնադարյան շինարարական արվեստի մասին համեմատաբար ամբողջական պատկերացում կազմելու համար, որովհետև երկրի մայրաքաղաքում մշակված քաղաքաշինական սկզբունքները, մոնումենտալ շենքերի տիպերը և հարդարանքի ձևերը օրինակ են ծառայել Հայաստանի մյուս խոշոր բնակավայրերի համար: Միևնույն ժամանակ Անիի քաղաքաշինությունն ու ճարտարապետությունն արժեքավոր են ոչ միայն հայկական, այլ նաև միջնադարյան Արևելքի շինարարական արվեստի պատմության համար: Անիի կառուցապատման մեջ, քաղաքի կերպարում ներդաշնակ զուգակցվել են տարբեր դարերի, զանազան նշանակության, տիպերի ու ծավալների շենքեր, որոնց թվում, հիրավի, շատերը գլուխգործոցներ են:*

## АРХИТЕКТУРА АНИ

*МУРАД АСРАТЯН*

Р е з ю м е

В Армении в IX–XI вв. большого развития достигли градостроительство и архитектура. Столица Армении город Ани располагался на мысу, образованном слиянием двух горных рек Ахурян и Анийская, и был окружен мощными стенами с круглыми башнями. Цитадель занимала наиболее высокую часть

города. Территория Ани была хорошо благоустроена, улицы имели мостовые и тротуары из каменных плит, для водоснабжения был построен гончарный водопровод. Крепость-дворец багратидских царей состояла из двух – северного и южного– больших комплексов, разделенных длинным коридором. Дворец был двухэтажный, в верхнем этаже находились парадные залы и комнаты, в нижнем – хозяйственные помещения.

Важную роль в архитектуре Армении послеарабского периода сыграла Анийская школа, которая, начиная с X в., стала ведущей и повлияла на весь последующий ход развития армянского зодчества в целом, а разработанное в столице стилистическое направление распространилось во всех провинциях страны.

Достижения Анийской школы неразрывно связаны с именем крупнейшего зодчего средневековой Армении Трдата. Анийский кафедральный собор был возведен Трдатом в 989–1001 гг. и был призван увековечить мощь возрожденного армянского государства. Это и определило как монументальные формы сооружения, так и его богатый декор. Собор имеет характерную для раннесредневековой армянской архитектуры композицию купольной базилики с четырьмя пилонами, отличается богатой резьбой по камню, все фасады украшены декоративной аркатурой с полуколонками. Не менее примечательно решение интерьера собора, в котором Трдат сделал важный вклад в развитие архитектурно-художественных форм культового зодчества. Центральный неф собора с куполом является доминантой внутреннего пространства здания благодаря сужению боковых нефов, которые фактически слились с центральным. Мощные, высокие пилоны обработаны в форме пучков тяг, что подчеркивает вертикализм композиции. Такая трактовка пространственного решения интерьера, членение подкупольных пилонов наподобие нервюр впоследствии встречается в готической архитектуре.

В 1001–1010 гг. Трдат построил в Ани церковь св. Григора (Гагкашен). Выполняя заказ царя Гагика I – воспроизвести в столице уже лежавший в руинах храм Звартноц (VII в.), Трдат не повторил в точности его архитектуру, а интерпретировал согласно художественному мышлению своей эпохи. Судя по надписи над южным входом восьмиапсидой церкви Спасителя (1036 г.) в Ани, ее автором также был Трдат.

Сравнительно хорошо сохранилась в Ани шестиапсидная церковь св. Григор рода Абугамренц (X в.). Оригинальную композицию имеет «Пастушья» церковь (XI в.) в пригороде Ани – она трехъярусная, и в плане имеет вид шестилучевой звезды.

Среди анийских памятников своей необычной композицией выделяется пятикупольная церковь Апостолов (1004–1031 гг.).

В XI в. нашествие турок-сельджуков нанесло Армении тяжелый удар. После освобождения от их власти в XII в правителями Армении стали военачальники– братья Закаре и Иване армянского княжеского рода, основав династию Захаридов.

В XII–XIII вв. среди городов страны по-прежнему главенствует Ани. В эту эпоху в процессе развития анийского зодчества главную роль уже играют гражданские сооружения. Дома зажиточных горожан в Ани были двухэтажными с жилыми комнатами на втором этаже. Примечательны дворцы Парона и Саргиса (XIII в.). Первый из них является двухэтажным зданием с подвалами, с коридорной системой планировки, с порталом на два этажа, был оформлен

мозаикой из наборных каменных плит.

Ани, являясь крупным торговым городом, располагал многочисленными гостиницами. Они были двухэтажными, с внутренним двориком и фонтаном, с несколькими десятками комнат. Входы гостиниц, наподобие дворцов, имели украшенные резьбой и мозаикой двухъярусные порталы. Резиденция католикоса, при сельджуках, пристройкой минарета была превращена в мечеть.

Церкви Ани XIII в. относятся к числу наиболее примечательных памятников этой эпохи. Город при Захаридах также привлекал лучшие творческие силы страны. Церковь св. Григора, построенная богачом Тиграном Оненцом в 1215 г., своим пышным декором одна из лучших церквей Ани. Изяществом архитектурных пропорций и рельефом отличается шестиапсидная купольная церковь Девичьего монастыря. Пышностью резного убранства отмечена и фамильная церковь Бахтагеки (XIII в.). Именно в Ани в XIII в. сложился новый архитектурный стиль армянского средневековья – «живописный».

## ARCHITECTURE OF ANI

*MURAD HASRATYAN*

S u m m a r y

Town-planning and architecture were highly developed in Armenia in the 9th–11th centuries. This was conditioned by the independence of the country, the revival and enhancement of the international trade, in which the capital city of Ani was involved. Ani lay on the promontory at the confluence of the mountain rivers Akhuryan and Ani. It was surrounded by solid walls with round towers. The citadel was the highest situated part of the city. The territory of Ani was well organized: the streets had stone paved sidewalks, an earthen water supply system was built. The temple-palace of the Bagratid kings consisted of two – northern and southern – big complexes, separated by a long passage. The palace was two-storied, with the ceremonial halls and rooms on the upper floor, and the utility rooms – on the ground floor.

An important role in the architecture of Armenia of the post-Arab period played the Ani creative school, which, beginning from the 10th century, became leading and influenced the entire course of the further evolution of Armenian architecture as such, while the stylistic trend, developed in the capital city, was disseminated in the provinces all over the country.

The achievements of the Ani school are inseparably linked with the name of Tiridates, the prominent architect of medieval Armenia. The Cathedral of Ani was erected by Tiridates in 989–1001 and was called to immortalize the power of the restored Armenian state. This accounted for the monumental forms of the construction, as well as for its plentiful ornamentation. The composition of the Cathedral – domical basilica with four pylons – is typical for early-medieval Armenian architecture. The Cathedral abounds with anaglyptics; all the facades are adorned with decorative arcature with semicolumns. No less notable is the solution of the interior of the Cathedral, which is Tiridates' most valuable contribution to the evolution of architectural-artistic forms of cultic architecture. The central nave of the Cathedral with the cupola dominates over the inner space of the building due to narrowing of the side naves, which practically merge with the central nave. The solid tall pylons are given the shape of beams of rods, thus emphasizing the verticalism of the composition. Such a treatment of the spatial solution of the interior, rib-like segmentation of the sub-cupola pylons is subsequently to be seen in Gothic architecture.

In 1001–1010, Tiridates built the Church of St. Gregory (Gagikashen) in Ani. Fulfilling the order of king Gagik I – to reproduce the already ruined temple of Zvartnots (the 7th century) in the capital – Tiridates, however, did not replicate in detail its architecture, but interpreted it in accordance with the artistic thinking of his own era. Judging by the inscription above the southern entrance of the octoapsidal Church of the Savior (1036) in Ani, it was also designed by Tiridates.

Relatively well preserved is the hexaapsidal Church of St. Gregory of the Abugamrents clan (the 10th century). The "Shepherd's" Church (the 11th century) in the suburbs of Ani has an original composition: it is three-level, and the top plan view is in the shape of a hexagram.

Among the monuments of Ani, outstanding is the five-domed Church of the Apostles (1004–1031).

The invasion of Seljuk Turks in the 11th century dealt Armenia a heavy blow. Upon liberation from their yoke in the 12th century, the military leaders, brothers Zakareh and Ivaneh, who came from an Armenian princely family, became the rulers of Armenia, thus founding the Zakarid dynasty. In the 12th–13th centuries, Ani still held dominating position among the cities of the country. At this period of evolution of architecture of Ani, a major part was already given to civil structures. The houses of well-off townspeople in Ani were two-storied, with the dwelling rooms on the second floor. Notable are the palaces of Paron and Sargis (the 13th century). The first is a two-storey building with cellars, with corridor system of planning, with a portal involving two floors, embellished with a mosaic of decorative stone tiles.

Ani, as a big trade city, abounded in hotels. Those were two-storey buildings with a porch and a fountain, with a few dozens of rooms. The entrances to the hotels, like those to palaces, were two-level portals, decorated with anaglyptics and mosaics. Under the Seljuk Turks, a minaret was added to the residence of Catholicos, and it was turned into a mosque.

The churches of Ani of the 13th century are among the most distinguished monuments of the time. Under the Zakarids, the city attracted the best creative talents of the country. The Church of St. Gregory, built by the rich man Tigran Honents in 1215, for its luxurious ornamentation is considered as one of the best churches of Ani. The hexaapsidal domical Church of the Virgins' Convent stands out for its refined architectural proportions and relief. The familial Church of Bakhtageki (the 13th century) is marked with splendor of the carved decoration. It was in Ani of the 13th century where the new – "pictorial" – architectural style of Armenian Middle Ages developed.